ՄՄԿ Մեկնաբանություն 29

Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ. բացահայտումներ

Հղումներ

- *«Վարձակալություններ»* ՖՀՄՍ 16
- *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»* ՀՀՄՍ 1 (վերանայված՝ 2007թ.)
- *«Հիմնական միջոցներ»* ՀՀՄՍ 16 (վերանայված՝ 2003թ.)
- *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ»* ՀՀՄՍ 37
- *«Ոչ նյութական ակտիվներ»* ՀՀՄՍ 38 (վերանայված՝ 2004թ.)
- «*Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ»* ՖՀՄՍՄԿ 12

Խնդիրներ

1. Կազմակերպությունը (օպերատորը) մեկ այլ կազմակերպության (շնորհատուի) հետ կարող է կնքել ծառայության համաձայնություն, որը տնտեսական և սոցիալական հիմնական ենթակառուցվածքների նկատմամբ տալիս է հանրային հասանելիություն: Շնորհատուն կարող է լինել հանրային հատվածի կամ մասնավոր հատվածի կազմակերպություն, ներառյալ կառավարման մարմին: Ծառայության կոնցեսիայի համաձայնությունների օրինակներն ընդգրկում են՝ ջրազտման և ջրամատակարարման համակարգերը, ավտոճանապարհները, ավտոկայանները, թունելները, կամուրջները, օդանավակայանները և հեռահաղորդակցության ցանցերը: Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ չհանդիսացող համաձայնությունների օրինակներ են՝ արտաքին ռեսուրսների ներգրավմամբ կազմակերպության ներքին ծառայությունների իրականացումը (օրինակ՝ աշխատակիցներին սպասարկող սրճարանը, շենքի սպասարկումը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման կամ տեղեկատվական տեխնոլոգիաների գործառույթները):

2. Ծառայության կոնցեսիայի համաձայնությունը, սովորաբար, նախատեսում է կոնցեսիայի ժամանակաշրջանի ընթացքում շնորհատուի կողմից օպերատորին փոխանցել՝

   ա) իրավունք՝ մատուցելու ծառայություններ, որը տնտեսական և սոցիալական հիմնական ենթակառուցվածքների նկատմամբ տալիս է հանրային հասանելիություն, և

   բ) որոշ դեպքերում իրավունք՝ օգտագործելու որոշակի նյութական ակտիվներ, ոչ նյութական ակտիվներ կամ ֆինանսական ակտիվներ,

   որոնց դիմաց օպերատորը՝

   գ) պարտավորվում է մատուցել ծառայություններ կոնցեսիայի ժամանակաշրջանի ընթացքում՝ որոշակի պայմանների համաձայն, և

   դ) երբ կիրառելի է, պարտավորվում է կոնցեսիայի ժամանակաշրջանի վերջում վերադարձնել կոնցեսիայի ժամանակաշրջանի սկզբում ստացված և/կամ կոնցեսիայի ժամանակաշրջանի ընթացքում ձեռք բերված իրավունքները:

3. Ծառայության կոնցեսիայի բոլոր համաձայնությունների ընդհանուր հատկանիշն այն է, որ օպերատորը միաժամանակ ստանում է իրավունք և ստանձնում է պարտականություն՝ մատուցելու հանրային ծառայություններ:

4. Խնդիրն այն է, թե ինչ տեղեկատվություն պետք է բացահայտվի օպերատորի և շնորհատուի ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններում:

5. Ծառայության կոնցեսիայի որոշ համաձայնությունների վերաբերող որոշակի ասպեկտների և բացահայտումների արդեն անդրադարձել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային առկա ստանդարտները (օրինակ՝ ՀՀՄՍ 16-ը կիրառվում է հիմնական միջոցների միավորների ձեռքբերման նկատմամբ, ՖՀՄՍ 16-ը կիրառվում է ակտիվների վարձակալության նկատմամբ, իսկ ՀՀՄՍ 38-ը՝ ոչ նյութական ակտիվների ձեռքբերումների նկատմամբ): Այնուամենայնիվ, ծառայության կոնցեսիայի համաձայնությունը կարող է ներառել կատարման ենթակա պայմանագրեր, որոնց Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները չեն անդրադառնում, բացառությամբ երբ այդ պայմանագրերն անբարենպաստ են, որոնց դեպքում կիրառվում է ՀՀՄՍ 37-ը: Հետևաբար, սույն մեկնաբանությունն անդրադառնում է ծառայության կոնցեսիայի համաձայնությունների լրացուցիչ բացահայտումներին:

Փոխհամաձայնություն

6. Որոշելու համար, թե ինչ համապատասխան բացահայտումներ պետք է կատարվեն ծանոթագրություններում, պետք է դիտարկվեն ծառայության կոնցեսիայի համաձայնությունների բոլոր ասպեկտները: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում օպերատորը և շնորհատուն պետք է բացահայտեն հետևյալը՝

   ա) համաձայնության նկարագրությունը,

   բ) համաձայնության նշանակալի պայմանները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապագա դրամական միջոցների հոսքերի գումարի, ժամկետի և որոշակիության վրա (օրինակ՝ կոնցեսիայի ժամանակաշրջանը, գնի վերանայման ամսաթվերը և հիմունքը, որի համաձայն տեղի են ունենում գնի վերանայումը կամ վերաբանակցումը),

   գ) ստորև նշվածների բնույթը և շրջանակը (օրինակ՝ քանակը, ժամանակաշրջանը կամ գումարը, ինչպես նպատակահարմար է)՝

      (i) որոշակի ակտիվներ օգտագործելու իրավունքներ,

      (ii) ծառայություն մատուցելու պարտականություններ կամ ծառայության մատուցում ակնկալելու իրավունքներ,

      (iii) հիմնական միջոցների միավորներ ձեռք բերելու կամ կառուցելու պարտականություններ,

      (iv) կոնցեսիայի ժամանակաշրջանի վերջի դրությամբ որոշակի ակտիվներ տրամադրելու պարտականություններ կամ որոշակի ակտիվներ ստանալու իրավունքներ,

      (v) նորացման և դադարեցման հնարավորություններ,

      (vi) այլ իրավունքներ և պարտականություններ (օրինակ՝ հիմնական վերանորոգումներ),

   դ) ժամանակաշրջանի ընթացքում համաձայնության մեջ տեղի ունեցած փոփոխություններ, և

   ե) ինչպես է դասակարգվել ծառայության կոնցեսիայի համաձայնությունը:

6Ա. Օպերատորը պետք է բացահայտի կառուցման ծառայությունների՝ ֆինանսական ակտիվով կամ ոչ նյութական ակտիվով փոխանակման արդյունքում ժամանակաշրջանում ճանաչված հասույթի և շահույթի կամ վնասի գումարը:

7. Սույն մեկնաբանության 6-րդ պարագրաֆի համաձայն պահանջվող բացահայտումները պետք է կատարվեն առանձին՝ ծառայության կոնցեսիայի յուրաքանչյուր համաձայնության համար, կամ

հանրագումարային՝ ծառայության կոնցեսիայի համաձայնությունների յուրաքանչյուր դասի համար: Դասը համանման բնույթի ծառայություններ (օրինակ՝ վճարների հավաքագրում, հեռահաղորդակցության և ջրազտման ծառայություններ) ներառող ծառայության կոնցեսիայի համաձայնությունների խմբավորում է:

Փոխհամաձայնության ամսաթիվը

2001 թվականի մայիս

Ուժի մեջ մտնելը

Սույն մեկնաբանությունն ուժի մեջ է մտնում 2001 թվականի դեկտեմբերի 31-ին:

Կազմակերպությունը պետք է 6(ե) և 6Ա պարագրաֆների փոփոխությունները կիրառի 2008 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների նկատմամբ: Եթե կազմակերպությունը ՖՀՄՄՄԿ 12-ը կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի նկատմամբ, ապա նշված փոփոխությունը պետք է կիրառվի այդ ավելի վաղ ժամանակաշրջանի նկատմամբ:

2016 թվականի հունվարին հրապարակված ՖՀՄՍ 16-ով փոփոխվել է պարագրաֆ 5-ը: Կազմակերպությունը պետք է կիրառի այդ փոփոխությունը, երբ կիրառում է ՖՀՄՍ 16-ը: